

պատմութեան դասախոսութեան ա-
թոռ մըն ալ, ու կ ուկաս Կինի անու-
նով երեւելի բնախօսը, որ տասնըվեց
տարիէ 'ի վեր Պղողնեա նոյն ուսման
վրայ կը դասախոսէր, հրաւիրեց նոյն
աթոռը, յանձնելով անոր միանգամայն
բուսաբանական պարտիզի մը շինու-
թիւնը, որուն տեսչութիւնն ալ իրեն
յանձնեց: Այս բանիս համար 1544^{ին}
Առնոյ գետին եզերքը երկիր մը տուաւ,
ու 1545^{ին} պարտէզը լաւ կարգաւո-
րեալ վիճակի մէջ էր և բազմութեամբ
տեսակ տեսակ բոյսերու ալ ձոխա-
ցած. այս պարտէզս ինչուան հիմա ալ
կայ: Դասկանայի օրինակին Դատալիոյ
շատ կողմերն ալ հետեւեցան: Ու ե-
նետից ծերակոյտը 1546^{ին} Բատուայի
մէջ բուսաբանական պարտէզ մը հաս-
տատել տուաւ և տեսչութիւնը Ու ու-
ղովիկոս Անկուիլլարա բուսաբանին
յանձնեց: Պղողնեայի համալսարանն
ալ 1568^{ին} այսպիսի պարտէզ մը ունե-
ցաւ Ողիսես Ալտրովանտոյ բուսա-
բանին հսկողութեանը տակ: Դրեթէ
նոյն միջոցին Պիոս Ե քահանայապետը
նոյնպէս ուրիշ մ'ալ հիմնեց Հոռմայ
մէջ ՈՒկայէլ ՈՒերգագիին տեսչու-
թեամբը: ՈՒեսինա քաղաքին բուսա-
բանական պարտէզն ալ 1638 տարւոյն
Պետրոս Դասպելլիին խնամքովը հիմ-
նուեցաւ:

Հոլանտա, որն որ նոյն ատենը նշա-
նաւոր էր կարգէ դուրս մտաւոր զօրու-
թեան կողմանէ, առաջին ազգն եղաւ
որ Դատալիոյ օրինակին հետեւեցաւ:
1575^{ին} Ու էյտի համալսարանը հի-
մնուած ըլլալով՝ անոր կառավարները
պաշտօնեաներէն խնդրեցին, որ բուսա-
բանական պարտէզ մըն ալ անոր տրուի.
1577^{ին} երկիրը գնուեցաւ ու տեսչու-
թիւնը Ու էյտոր Պղուսդ անունով
հռչակաւոր բուսաբանին յանձնուեցաւ,
որ համալսարանին պարտէզը փոխա-
զրեց շատ տեսակ տունկեր, զորոնք
իր տանը մէջ միակած էր: Դիտենք որ
այն ատենէն 'ի վեր սկսեալ՝ Ատորին
Դահանգաց ծաղկադարմանութեան ա-
խորժը շատ ծաղկեցաւ, այնպէս որ

1641^{ին} Կրէօնինկէն քաղաքին համա-
լսարանին համար բուսաբանական պար-
տէզ մը շինուեցաւ և Ու ունգինկ բու-
սաբանին յանձնուեցաւ, և 1684 տա-
րւոյն ալ Ամսդերտամի պարտէզը հա-
տատուեցաւ, որուն տեսչութիւնը Ու ով
հաննէս Պատմմելին անունով բուսաբա-
նին տրուեցաւ:

Դատալիոյ ու Հոլանտայի օրինակին
հետեւեցաւ նաև Դաերմանիա ալ: Ու պ-
սոնիոյ կայսրը 1580^{ին} հասարա-
կաց ուսման վերանորոգութիւն մը ընե-
լով, 1605^{ին} Այբեցիկի մէջ ալ բուսա-
բանական պարտէզ մը շինել տուաւ:
Խունկէրման բուսաբանն ալ Ախսէն քա-
ղաքին համալսարանին համար, զորն որ
նոյն ատենը Ամստելդեմ հիմնած էր,
խնդրեց բուսաբանական պարտէզ մը ու-
խնդրեց հասաւ, և 1625^{ին} նոյն
չորհրդը ընդունեցաւ 'Ախտեմպէրկի
ծերակուտքէն Ալդորֆ քաղաքին համա-
լսարանին համար ալ. նոյնպէս Ու էնայի
համալսարանը իրեն համար հաստատեց
մէկ ուրիշ մը. և Ու ընեսդ Շ աւէմ-
պուրկ ալ Ախնդէլն քաղաքին մէջ հա-
տատեց բուսաբանական պարտէզ մը
1621^{ին}, Անկէց վերջը բոլոր գերմանա-
կան համալսարանները սոյն օրինակին
հետեւեցան, և կայսերութեան բոլոր
գաւառները ամենքն ալ քիչ շատ նշա-
նաւոր բուսաբանական պարտէզներ ու-
նեցան:

(ԳԻՏԻ ԸԱՐՈՒԽՎՈՒՒ)

ՉԱ.ՓԱ.ԿԱ.Ն ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՉԱՓԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Ցանկութական դրույիւն չափոց ու կշոց :

(Տես երևս 337)

Այս սկզբունքներով՝ հիմա կրնանք
խորանարդ մեղրի մը տասնորդական մա-
սը խորանարդ չափերու տրոչել: Ու-
տի այս թիւս Օմ. Ե, 358 առնունք մեղրի
օրինակ, որ խորանարդ մեղրի մը 358

Հազարորդքը կը բացատրէ . և որովհետեւ
տեսանք թէ խորանարդ մեղրի իւրա-
քանչիւր հազարորդն է մէկ խորանարդ
տասնորդամեղր , ուրեմն 0մ.ի , 358
թիւն ալ է 358 խորանարդ տասնորդա-
մեղր : 1,0յնպէս ալ 0մ.ի , 000789 թի-
ւը , որ խորանարդ մեղրի մը 789 մի-
լիոներորդքը կը բացատրէ , հաւասար է
789 խորանարդ հարիւրորդամեղրի .
վասն զի խորանարդ մեղրն է մէկ միլիոն
խորանարդ հարիւրորդամեղր . անոր հա-
մար խորանարդ մեղրի մը իւրաքանչիւր
միլիոներորդն է մէկ խորանարդ հարիւ-
րորդամեղր : Արով այս թիւս 0մ.ի ,
358789 կ'ընէ 358 խորանարդ տասնոր-
դամեղր և 789 խորանարդ հարիւրոր-
դամեղր :

Ասկէ այս ընդհանուր կանոնը կ'ելլէ ,
որ խորանարդ մեղրի մը տասնորդական
մասունքը խորանարդ տասնորդամեղր ,
խորանարդ հարիւրորդամեղր , խորա-
նարդ հազարորդամեղր , և այլն , բա-
ցատրելու համար պէտք է այս տասնոր-
դական մասը իրեք իրեք թուանշանով
դաս դաս բաժնել ստորակետէն սկը-
սեալ , միտք դնելով որ եթէ վերջին
դասը մէկ կամ երկու թուանշան ու-
նենայ նէ՛ իրեն աջակողմը երկու զրոյ
կամ մէկ զրոյ մը գնել . ստորակետէն
ետե առաջին դասը խորանարդ տաս-
նորդամեղրները կը բացատրէ , երկրորդ
դասը խորանարդ հարիւրորդամեղրնե-
րը կը բացատրէ , երրորդ դասը խորա-
նարդ հազարորդամեղրները կը բացա-
տրէ , և այլն :

Խորանարդ մեղքին բազմապատիկ-
ներն են խորանարդ տաճնամեղքը, խո-
րանարդ հարիւրամեղքը, խորանարդ հա-
զարամեղքը և խորանարդ բիւրամեղքը :

Սորբանարդ տասնամեղը այնպիսի
քուէ մըն է՝ որ տասը մեղը երկայնու-
թիւն, տասը մեղը լայնութիւն և տա-
սը մեղը թանձրութիւն ունի. որով տա-
րածոցն ալ 10 անգամ 10 անգամ 10 և
կամ հազար խորանարդ մեղը կ'ըլլայ,
որ և նոյն է 1000 անգամ խորանարդ
մեղը մը :

Խորանարդ հարիւրամեղը այնպիսի

Քուեւ մըն է՝ որուն թէ լայնքը , թէ եր-
կայնքը և թէ թանձրութիւնը հարիւր
մեղք է . որով տարածոյն ալ 100 ան-
գամ 100 անգամ 100 և կամ միլիոն
խորանարդ մեղք կ'ըլլայ , որ և նոյն է՝
1000 խորանարդ տասնամեղք :

Սորանարդ հազարամեղրը այնպիսի
քուէ մըն է՝ որուն իւրաքանչիւր կողմը
հազար մեղր երկայնութիւն ունի. ո-
րով տարածոցն ալ 1000 անգամ 1000
անգամ 1000 և կամ հազար միլիոն խո-
րանարդ մեղր կ'ըլլայ, որ և նոյն է՝
1000 խորանարդ հարիւրամեղր :

Իսկ խորանարդ բիւրամեղքը այնպի-
սի քուէ մըն է՝ որուն թէ երկայնու-
թիւնը, թէ լայնութիւնը և թէ թան-
ձրութիւնը մէկ բիւրամեղք է . որով
տարածոցն ալ 10000 անգամ 10000
անգամ 10000 և կամ միլիոն անգամ
միլիոն կամ թէ մէկ երկմիլիոն խորա-
նարդ մեղք կ'ըլլայ , որ և նոյն է՝ 1000
խորանարդ հազարամեղք :

Աւտի խորանարդ տասնամեղըն է
1000 խորանարդ մեղք , խորանարդ հա-
րիւրամեղըն է 1000 խորանարդ տաս-
նամեղի , խորանարդ հազարամեղըն է
1000 խորանարդ հարիւրամեղք , խո-
րանարդ բիւրամեղըն է 1000 խորա-
նարդ հազարամեղք :

Հաստատուն մարմնոց տարածոցը չափելու համար խորանարդ մեղքը կը գործածուի ընդհանրապէս . իսկ երբոր խորանարդ մեղքը այլքելի փայտ չափելու գործածուի՝ առէք կ'ըստուի , որ իր կրկնապատիկն ունի իշխասութէր , տասնպատիկը՝ գր՝ գատնասութէր . ատաղձագործութեան մէջ կը բանեցուի նաև գատնորդասութէր , որ է խորանարդ մեղքի մը տասներորդ մասը :

Ո՞եծամեծ մարմիններու տարածոցը
չափելու համար, ինչպէս օրինակի հա-
մար երկրիս, արեգական և ուրիշ մոլ-
ուակաց տարածոցն իմանալու համար՝ կը
գործածուի խորանարդ հազարամետրը
և խորանարդ բիւրամետրը։ Աստի կ'ը-
սուի թէ երկրիս տարածոցն է իբր
10831500000000000000000000 խորա-
նարդ մետր, կամ թէ 10831500000000

խորանարդ հազարամետքր , և կամ 1083150000 խորանարդ բիւրամետքր :

Խոր . հազարորդմ .	է հազար միլիոներորդ խոր . մեդրի .	0մ.հ.000000001
,, հարիւրորդմ .	,, Միլիոներորդ խոր . մեդրի .	0մ.հ.000001
,, տասնորդմ .	,, հազարորդ խոր . մեդրի .	0մ.հ.001
,, մեդր .	,, Մէկ խոր . մեդր .	1մ.հ.
,, տասնամ .	,, հազար խոր . մեդր .	1000մ.հ.
,, հարիւրամ .	,, Միլիոն խոր . մեդր .	1000000մ.հ.
,, հաշարամ .	,, հազար միլիոն խոր . մեդր .	1000000000մ.հ.
,, բիւրամ .	,, Երկմիլիոն խոր . մեդր .	100000000000մ.հ.

(Սմանեան տէրութեան մէջ տարածոցի չափ կրնայ գործածութիւնորանարդ ճարտարապետական կանգունը պղտիկ մարմնոց համար , և խորանարդ մղոնը մեծամեծ մարմնոց համար :

Խորանարդ ճարտարապետական կանգունը այնպիսի քուէ մըն է , որուն թէ երկայնութիւնը , թէ լայնութիւնը և թէ թանձրութիւնը մէկ ճարտարապետական կանգուն է . և որովհետեւ ճարտարապետական կանգունն է 24 սաղ փարմագ կամ մատն , ուրեմն խորանարդ ճարտարապետական կանգնոյն տարածոյն է 24 անգամ 24 անգամ 24 և կամ 14824 խորանարդ սաղ փարմագ . կամ թէ 14824 անգամ այնպիսի քուէ մը , որուն ամէն մէկ կողմը մէկ սաղ փարմագ ըլլայ : Այսպէս ալ խորանարդ սաղ փարմագին թէ երկայնքը , թէ լայնքը և թէ թանձրութիւնը 12 սաղը փարմագ կամ զիծ է , որով խորանարդ սաղ փարմագին տարածոյն է 12 անգամ 12 անգամ 12 և կամ 1728 խորանարդ սաղը փարմագ . կամ թէ 1728 անգամ այնպիսի քուէ մը , որուն ամէն մէկ կողմը մէկ սաղը փարմագ ըլլայ : Աւ հետեւաբար երբոր խորանարդի մը կողմը ուրիշ խորանարդի մը կողման $\frac{1}{24}$ է , անոր տարածոյն ալ երկորդին տարածոյն $\frac{1}{14824}$ կ'ըլլայ . ուստի խորանարդ սաղ փարմագին տարածոյն է 14824 երորդ մասն խորանարդ ճարտարապետական կանգնոյն տարածոյն : Ամանապէս խորանարդ սաղը փարմագին իւրաքանչիւր կողմն է $\frac{1}{12}$ խորանարդ սաղ փարմագին կողման , կամ թէ $\frac{1}{128}$ խորանարդ ճարտարապետական կանգնոյն կողման . իսկ տարածոյն ալ է $\frac{1}{1728}$ խորանարդ սաղ փար-

խորան հիմա ըսածներս ամփոփելով կը տեսնենք որ ըստ նոր դրութեան

Խոր . հազար միլիոներորդ խոր . մեդրի .	0մ.հ.000000001
,, Միլիոներորդ խոր . մեդրի .	0մ.հ.000001
,, Հազարորդ խոր . մեդրի .	0մ.հ.001
,, Մէկ խոր . մեդր .	1մ.հ.
,, Լայնութիւնը խոր . մեդր .	1000մ.հ.
,, Երկմիլիոն խոր . մեդր .	1000000մ.հ.
,, Երկմիլիոն խոր . մեդր .	1000000000մ.հ.
,, Երկմիլիոն խոր . մեդր .	100000000000մ.հ.

մագին տարածոցին , կամ թէ $\frac{1}{20971408}$ խորանարդ ճարտարապետական կանգնոյն տարածոցին :

Հոս ալ պէտք չէ շփոթել խորանարդ ճարտարապետական կանգնոյն քսանը ըորսերորդ մասը խորանարդ սաղ փարմագի հետ . վասն զի խորանարդ ճարտարապետական կանգնոյն քսանը ըորսերորդ մասն է 576 խորանարդ սաղ փարմագ , իսկ խորանարդ սաղ փարմագն է խորանարդ ճարտարապետական կանգնոյն 14824 երորդ մասը : Այսպէս ալ խորանարդ սաղ փարմագին տասուերկուերկուերորդ մասը պէտք չէ շփոթել խորանարդ սաղը փարմագի հետ . վասն զի խորանարդ սաղ փարմագին տասուերկուերորդ մասն է 144 խորանարդ սաղը փարմագ , իսկ խորանարդ սաղը փարմագն է խորանարդ սաղ փարմագին 1728 երորդ մասը :

Իսկ Տաճկաց խորանարդ ճարտարապետական կանգունը խորանարդ մեդրի վերածելու համար տեսանք որ $1\text{x.4} = 0\text{m.757738}$, ուստի խորանարդելով՝ կը գտնենք որ $1\text{x.4.4} = 0\text{m.4} , 43507$: Հիմա ուզելով խորանարդ սաղ փարմագն ալ , սաղը փարմագն ալ խորանարդ մեդրի վերածել , պէտք է խորանարդ ճարտարապետական կանգնոյն մեդրական բացատրութեան 14824 երորդ մասնը առնուլ խորանարդ սաղ փարմագը գտնելու համար , ըստ որում խորանարդ ճարտարապետական կանգունն է 14824 խորանարդ սաղ փարմագ . և խորանարդ սաղ փարմագին մեդրական բացատրութեան 1728 երորդ մասնը առնուլ խորանարդ սաղը փարմագը գտնելու համար , ըստ որում խորանարդ սաղ փարմագն է 1728 խորանարդ

սաղըր ֆարմագ : Արով կ'ըլլայ 1 խորանարդ սաղ ֆարմագը = 0մ.ի. 0000029 , և 1 խորանարդ սաղըր ֆարմագը = 0մ.ի. 000000017 :

Եւ փոխադարձաբար խորանարդ մեղքը խորանարդ ճարտարապետական կանգնոյ վերածելու համար տեսանք որ $1^m = 1\frac{d}{4}, 319717$, ուստի խորանարդելով՝ կը գտնենք որ $1^m \cdot i = 2\frac{d}{4} \cdot i$, 098489 . որով խորանարդ տասնորդամեղքն ալ կ'ըլլայ 0 $\frac{d}{4} \cdot i$, 002098 , խորանարդ հարիւրորդամեղքն ալ կ'ըլլայ 0 $\frac{d}{4} \cdot i$, 000002 , և այն :

Ո՞ւծամեծ մարմնոց տարածոցը չափելու համար , ինչպէս են օրինակի համար երկնային մարմինները , Տաճկաց մէջ խորանարդ ցամաքային մղոնը կը բնայ գործածուիլ . որ խորանարդ հազարամեղքի և խորանարդ բիւրամեղքի վերածելու համար տեսանք որ ցամաքային մղոնն էր $\frac{3}{5}$ պ. , և $\frac{3}{50}$ պ. . որմէ 1 խորանարդ ցամաքային մղոնը կ'ըլլայ = $\frac{125\text{միլ.} \cdot i}{27000} = 0\text{միլ.} \cdot i, 004629$:

Եւ փոխադարձաբար 1միլ.ի = $\frac{27000\text{միլ.} \cdot i}{125} = 216$ խորանարդ ցամաքային մղոն :

Ազելով հիմա երկրիս տարածոցը Տաճկաց խորանարդ մղոնով բացատրել , տեսանք որ այս տարածոցն էր մերձաւորապէս 1083150000 խորանարդ բիւրամեղք . արդ 1 խորանարդ բիւրամեղքն ըլլալով 216 խորանարդ ցամաքային մղոն Տաճկաց , ուրեմն երկրիս տարածոցն ալ կ'ըլլայ մերձաւորապէս 233960400000 խորանարդ ցամաքային մղոն Տաճկաց :

(ՊԻՏԻ ՀԱՐՈՒՆԱԿՈՒՄ)

ՏԱՏԵՍԱԿԱԾԱՆ

ՊՐԻՎԵ ՊՐԻՎԵ ԱՐԵԼ ԽԵՂ ՏԵ :

Կարմիր առ ճերմակ հաղործ 1 հագին ըշոծ . Դեռ լաւ չհասունցած՝ քաղէ ու հատիկ ըրէ , որպէս զի վերջէն լեզութիւն չունենայ . ետքը մէկ եփ մը միայն տուր , որն որ սովորաբար բաւական կ'ըլլայ : Ամէն ուսակ առար . Քաղած ատենդ նայէ որ քիչ մը կարծրկեկ ըլլան , և թէ կոթովը ուզես , թէ առանց կոթի կրնաս անվնաս կերպով պահել զանոնք . մէկ եփ մը բաւական է պղտիկ տեսակներուն համար , բայց աւելի կարծր եղողներուն համար երկու եփ հարկաւոր է :

Դէլչ , ծիւռան , լէր դէլչ ² . Այս ետքինս պէտք է կեղեւլ , ապա թէ ոչ լեզութիւն կ'ունենայ . իսկ առաջինները պէտք է որ հասուննալու մօտ գեռ քիչ մը կարծրկեկ եղած ատենդին քաղես . ու ետքը ամենուն ալ մէկ եփ մը տալով՝ ամբողջ կը պահես :

Անդինին ³ . Ընդ հակառակն ասիկայ լաւ հասուննալէն ետքը ժողվէ ու վայի եղած աղուա . մազը մաքրէ . ետքը կրակի վայ ամանով ջուր գիր , ու եփ եղած ատենդ՝ ուրիշ ամանի մէջ գնելով սերկելով տաք ջուրվ կաթսային մէջ խոթէ , ուր կէս ժամամը պէտք է որ թողուս :

Նարնչին ⁴ ու իբրանին ⁵ վեց վայրկեան եփը բական է :

Ելուի ⁶ ու արգունի նորինի ⁷ . Այս պտուղներուն ամենափափուկ ու դիւրակորնչելի անուշահոտութիւնը պահելու համար բերաննին լաւ գոց շնչերու մէջ գիր , ու անանկ եփ եղած ջրի մէջ խոթէ :

Կէսաս , լոյի իւսաս , կափաս ⁸ , եռել . Զասոնք մէկ կամ երկու անգամ եփ գիր՝ ամենեփն մի և նոյն կերպով . ինչ որ վերն ըսինք սերկելին համար , և կոթերնին ալ վրայէն փրցուր : Սովորաբար այս պտուղները հոյլ ⁹ գարձենելով կը պահէն , որ ետքէն պիտի գնենք :

1 ՏՃ. Ֆրէնի ԽԵՂ-ԴԵ :

2 ԳՂ. Brugnon.

3 ՏՃ. Այլս :

4 ՏՃ. Փորթո-Գալ:

5 ՏՃ. Աղամ Գալսաւս :

6 ՏՃ. Չիւեֆ :

7 ԳՂ. Framboise.

8 ՏՃ. Խը-Րէմպէ :

9 ՏՃ. Էօւ: